մառօտ կենսագրութեան, և վերջացնում է իւր խորհրդածութիւնը քննադատելով Պ. Մելիքզադէի կաթուղիկոսական հարցի առթիւ Մշակի մէջ մի շարք յօդուածները։

—

Ամսոյս 8ին Զատկի տօնի օրը Ս. Իջման Տաճարում պատարագեց Ամեն. Տեղակալ Տէր Մակար Սրբազան Արքեպիսկոպոսը։ Ս. Պատարագից յետոյ Նորին Սրբազնութիւնը Վեհարանի դահլիճում ընդունեց Մայր Աթոռոյս Միաբանութիւնը, Վաղարշապատու քահանաներին, Դիւանատանց ծառայողներին։ Ժողովրդեան առաջաւորներին և ճեմարանի ուսուցիչներին։

Նորին Սրբազնութիւնը շնորհաւորեց Յիսուսի Ս. Յարութիւնը բարեմաղթութիւններով և օրհնութեամբ արձակեց։

—

Մայր Աթոռոյս Սինոդի Ատենադպրի պաշտօնի համար ցանկացողք թող դիմեն Սինոդին։ Այդ պաշտօնը ստանձնել կամեցողները պէտք է լինին աստիճանաւոր և լաւ գիտենան Ռուսերէն և Հայերէն գրաբառ։ Ռոճիկն է 500 բուբլ. սեղանի՝ 200 բուբլ. բնակարանի՝ 150 բուբլ. գումարն 850 բուբլի, իսկ պաշտօնը 9րդ աստիճանի է։

ՅՈՅՍ.

(Շելլէր)։

—

Լաւագոյն ապագայ օրերի վերայ
Մարդիկ շատ խօսում և երազումեն.
Եւ յուսով լի վազում, շտապումեն նոքա
Դէպի նպատակը բաղդալից ու ոսկեղէն.
Ծերանումէ աշխարհն, նորից մանկանում,
Բայց մարդն լաւ յոյսը բնաւ չէ կորցնում։

Յոյսն է նորան կեանքի մէջ բերում,
Ուրախ տղային յոյսը գգվումէ.
Յուսոյ հրապոյրն է պատանուն գրաւում,
Ծերունու հետ էլ յոյսը չէ մեռնում։
Յոգնած կեանքի հանգիստ՝ դագաղն է մահուան.
Մարդը յոյս է դնում նաև նորա վերան։

Յոյսը չէ դատարկ, շողոքորդ մի միտք
Մի մեծ յիմարի ուղեղում ծնուած,
Սրտի խորքից միշտ կանչումէ նա պիրկ,
Թէ մի լաւ բանի համար ենք ծնուած.
Եւ ինչ որ ներքին ձայնն է խօսում,
Յուսացող հոգուն երբէք չէ խաբում։

Մ. Զ.